ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Հոկտեմբերի 25-ին լրացավ Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնի դասախոս, Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի անդամ Շուրա Օհանյանի ծննդյան 70-ամյակը: Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ դատահրավական համակարգում երկարամյա բեղմնավոր աշխատանքի և ծննդյան 70-ամյակի կապակցությամբ իրավաբան, հոբելյարին շնորհվել է ԼՂՀ վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում: ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ևս օրվա առթիվ Շ. Օհանյանին պարգևատրել է նվերով և շնորհակալագրով:

Շուրա Օհանյանը ԱրՊՀ-ում դասավանդում է 1994 թվականից, դասավանդել է տարբեր առարկաներ, բայց հիմնականում մասնագիտացված է «Քաղաքացիական իրավունք»-ի մեջ: «Դասապրոցեսը հետաքրքիր դարձնելու նպատակով միշտ փորձել եմ օգտագործել դասավանդման տարբեր մեթոդներ՝ հնարավորինս համատեղելով տեսականն ու գործնականը»,- ասել է նա:

Հոբելյարին շնորհավորել և նրա անցած ուղին արժևորել է իրավունքի ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Ռիտա Առուստամյանը: «Շուրա Օհանյանը ամբիոնում երկար տարիների աշխատանքի ընթացքում իրեն դրսևորել է որպես կոլեկտիվի լավ անդամ, նա ուշադիր և հոգատար է ինչպես կոլեկտիվի անդամների, այնպես էլ՝ ուսանողների նկատմամբ»,- ասել է ամբիոնի վարիչը՝ հավելելով, որ դասախոսը անընդհատ կատարելագործում է իր մասնագիտական ունակությունները, պրակտիկ աշխատանքի փորձը հաջողությամբ օգտագործում է տեսական նյութը մատուցելիս, պարբերաբար կազմակերպում է դատավարական միջոցառումներ՝ խթանելով ուսանողների մասնագիտական հմտությունների ձեռքբերումը:

Ուսանող Պարույր Մարտիրոսյանը ևս շնորհավորել է դասախոսին՝ նշելով, որ Շ. Օհանյանը ուսանողների կողմից սիրված դասախոսներից է, որը միշտ պատրաստակամ է նրանց օգնելու հարցում: «Նա հարուստ անցյալ ունեցող իրավաբան է, պատվախնդիր, արժանապատիվ, հրաշալի հումոր և սրամտություն ունեցող դասախոս, հայրենասեր քաղաքացի»,- ասել է ուսանողը:

Շուրա Օհանյանը զբաղեցրել է տարբեր պաշտոններ:

1977-1979թթ. աշխատել է ԼՂ մարզսպառմիությունում՝ որպես ավագ իրավախորհրդատու:

1979-1994թթ. եղել է Ստեփանակերտի քաղժողդատարանի ժողդատավոր, 1994-1995թթ.՝ Ստեփանակերտի քաղվարչակազմում՝ որպես ավագ իրավախորհրդատու, 1995-1996թթ.՝ ԼՂՀ արդարադատության պետվարչությունում՝ գլխավոր խորհրդական, 1996-2001թթ.՝ ԼՂՀ Գլխավոր դատախազությունում՝ որպես կարևորագույն գործերով ավագ քննիչ: 2002 թվականից Շուրա Օհանյանը ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր է: Ունի արդարադատության 3-րդ դասի դատավորի որակավորում:

2012թ. ԱՀ փաստաբանների պալատի, իսկ 2014թ. պալատի խորհրդի անդամ է:

Պաշտոնական գործունեությանը զուգընթաց զբաղվել է նաև հասարակական գործունեությամբ: Նա ակտիվորեն մասնակցել է 1988-1994թթ. ԼՂՀ ազատագրական շարժմանը:

Շուրա Օհանյանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը մատուցած ծառայությունների և ներդրած ավանդի համար 2009թ. պարգևատրվել է ԼՂՀ «Մայրություն» ՀԿ-ի «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» հուշամեդալով, իսկ 2014թ-ին՝ ԼՂՀ վարչապետի հուշամեդալով:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Ս.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելիր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»
№ 07(221)
հոկտեմբեր, 2019

ԿԱՅԱՑԵԼ Է ԱՐՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Հոկտեմբերի 3-ին կայացած գիտխորհրդի նիստում քննարկվել և հաստատվել են գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու, ԱրՊՀ հավատարմագրման դիմելու գործընթացի մասին և մի շարք այլ հարցեր, ի գիտություն ընդունվել հաշվետվություններ, տպագրության երաշխավորվել ուսումնամեթոդական ձեռնարկ:

Ի պաշտոնե կատարված փոփոխությունների արդյունքում գիտական խորհրդի կազմում ընդգրկվել են «Գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության» ստորաբաժանման պետ Նանա Առուստամյանը և ՈՒԽ նախագահի պաշտոնակատար Լիլիթ Մարգարյանը:

Օրակարգային առաջին հարցը վերաբերում էր 2019-2020 ուսումնական տարվա գործընթացին, որը ներկայացրել են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը և ֆակուլտետների դեկանները:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ամփոփ տեղեկատվություն է ներկայացրել հավատարմագրման գործընթացի մասին՝ նշելով, որ «Որակի ապահովման ձեռնարկը» արդեն պատրաստ է տպագրության, իսկ մի շարք աշխատանքներ անհրաժեշտ է թարգմանել:

ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը տեղեկացրել է, որ հոկտեմբերի 1-ից գործում է «Հոգեբանական ակումբ», որի հիմնական նպատակն է նպաստել ուսանողների մասնագիտական կայացմանը, խթանել պրակտիկ կարողությունների ձևավորմանը, աջակցել գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը: Նրա խոսքով՝ նմանատիպ ծրագրերը կարևոր են նաև հավատարմագրման ընթացքին պատշաճ նախապատրաստվելու տեսանկյունից:

Օրակարգի հաջորդ հարցում գիտխորհրդին կից գործող մշտական հանձնաժողովների նախագահները ներկայացրել են 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի կատարած աշխատանքների հաշվետվությունները, և հաստատվել են 2019-2020 ուսումնական տարվա աշխատանքային պլանները:

Հաջորդիվ քննարկվել են նաև նոյեմբերի 3-ից 5-ը ԱրՊՀ-ում կայանալիք միջազգային ուսանողական գիտաժողովի և ֆորումի նախապատրաստական աշխատանքները:

ԱրՊՀ ռեկտորը գիտխորհրդին է ներկայացրել օրակարգի մյուս հարցը՝ «Արցախի ժողովրդագիտությունը» գիտական մատենաշար հիմնադրելու մասին:

Խոսելով մատենաշարի մասին՝ ռեկտորը տեղեկացրել է, որ նախագծով նախատեսվում է հավաքագրել, խմբագրել, սրբագրել, ծանոթագրել և հատորներով հրատարակել Արցախի ժողովրդագիտության վերաբերյալ 19-րդ դարի կեսերից առ այսօր առանձին գրքերով ու տասնյակ հանդեսներում լույս տեսած, ինչպես նաև ԱՀ, ՀՀ և արտերկրի տարբեր թանգարաններում և արխիվներում, նաև առանձին անհատների ու նրանց ժառանգների արխիվներում ձեռագիր վիճակում պահվող աշխատությունները, ժողվածուները, հոդվածները:

Գիտխորհուրդը տպագրության է երաշխավորել մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ, կողմ քվեարկել մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար Արմենուհի Աբալյանին դոցենտի կոչում շնորհելու և այն ՀՀ ԲՈԿ-ի վավերացմանը ներկայացնելու հարցին:

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ. ՈՒԽ-Ն ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ ՈՒՆԻ

Հոկտեմբերի 2-ին կայացել է Արցախի պետական համալսարանի ՈՒԽ լիագումար նիստ, որին ներկա էին ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ուսանողական գիտական ընկերության նախագահը, ուսանողական խորհրդի անդամներ: Պրոռեկտորը գոհունակություն է հայտնել ուսանողական կառույցների աշխատանքից՝ նշելով, որ համալսարանի ղեկավարությունը նույնպես ուսանողական ակտիվի հետ հանդիպման ժամանակ իր գոհունակությունն է հայտնել աշխատանքի արդյունավետության, ուսանողության մեջ տիրող ընդհանուր բարոյահոգեբանական մթնոլորտից:

Նիստի մասնակիցները քննարկել են հասարակական ակտիվության միավորների հաշվարկման սկզբունքները, ԱրՊՀ հավատարմագրման գործընթացի ընթացքը, ԱրՊՀ 50-ամյակին նվիրված գիտաժողովին և ֆորումին նախատեսվող անելիքները, խոսել քննաշրջանի ընթացքի, ծանոթության երեկոների, համալսարանական ակումբների և խմբակների, առաջիկա միջոցառումների մասին:

Պրոռեկտորի խոսքով՝ ձևավորվել է ՈՒԽ նոր կազմ, ֆակուլտետներում ընտրվել են համապատասխան տեղակալներ, քարտուղարներ, ուղղությունների պատասխանատուներ:

Ձայների մեծամասնությամբ ԱրՊՀ ուսանողական խորհրդի նախագահի պաշտոնակատար է ընտրվել բանասիրական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Լիլիթ Մարգարյանը: Նա, շնորհակալություն է հայտնել իրեն վստահելու և ընտրելու համար՝ ընդգծելով, որ նոր թիմով փորձելու են անել ամեն ինչ՝ ի նպաստ բուհի և ուսանողության շահերի:

ԱՄՆ ՀԱՅ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԱրՊՀ

Հոկտեմբերի 15-ին ԱՄՆ Հայ իրավաբանական միության պատվիրակությունն այցելել է Արցախի պետական համալսարան և հանդիպում ունեցել ուսանողների հետ: Պատվիրակության կազմում էին իրավաբաններ Կարո Ղազարյանը և Գառնիկ Գրիգորյանը:

Ողջունելով հյուրերին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Հայ իրավաբանների միությանը՝ կարևորելով միության ծավալած հայանպաստ գործունեությունը: Ռեկտորը ներկայացրել է նաև միության աջակցությամբ ԱրՊՀ-ում գործող իրավաբանական կլինիկայի կողմից իրականացվող գործառույթները:

«Իրավաբանական կլինիկան ոչ միայն նպաստում է իրավագիտություն մասնագիտությամբ սովորող ուսանողների մասնագիտական փորձի և հմտությունների զարգացմանը, այլև անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերում Արցախի բնակչությանը, ովքեր հնարավորություն չունեն վճարովի հիմունքներով իրավաբանական աջակցություն ստանալու»,-ասել է ռեկտորը՝ նշելով, որ կլինիկայի ծառայություններից օգտվել ցանկացող բնակիչների ներկայացրած հայտերը վկայում են, որ այն պահանջված է նաև իրավաբանական աջակցության կարիք ունեցող քաղաքացիների համար:

Խոսելով Հայ իրավաբանական միության գործունեությունից՝ Կարո Ղազարյանը նշել է, որ միության առանցքային գործառույթը հայ ազգային շահերը ներկայացնելն է, հայոց պատմության փաստերը պաշտպանելը:

«Մեր հիմնական նպատակներից է նաև Արցախի ժողովրդին, Արցախի պետականությանը աջակցելը: Մեր աշխատանքի մի մասն արտացոլվում է նաև համալսարանում բացված իրավաբանական կլինիկայի միջոցով, որի շնորհիվ Արցախի բնակչությունը հնարավորություն ունի անվճար իրավաբանական աջակցություն ստանալու: Իրավաբանական կլինիկայի գոյությունն այստեղ համարում եմ անհրաժեշտություն նաև մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից»,-ասել է Կ. Ղազարյանը:

Բանախոսությամբ հանդես է եկել միջազգային իրավունքի մասնագետ, ԱՄՆ Հայ իրավաբանների միության անդամ Գառնիկ Գրիգորյանը:

Բանախոսները այցելել են նաև իրավաբանական կլինիկա, զրուցել կլինիկայում աշխատող ուսանողների և դասախոսների հետ:

ՈՒՍՈՒՑՉԻ ՏՈՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Արցախի պետական համալսարանի գիտական գրադարանում ուսուցչի տոնին ընդառաջ կազմակերպվել է հանդիպում Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, մի շարք գրքերի հեղինակ, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Նատաշա Պողոսյանի հետ: Միջոցառմանը ներկա էին դպրոցի տնօրենը, ԱրՊՀ դասախոսներ, ուսանողներ:

Ողջունելով ներկաներին՝ գրադարանի տնօրեն Հասմիկ Հարությունյանը նշել է, որ միջոցառման նպատակը գիրք-ընթերցող կապի ամրապնդումն է և ուսուցչի տոնին ընդառաջ յուրատիպ խոնարհում ուսուցչի գործին:

Բանասիրական ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Զարինե Սառաջյանը, շնորհավորելով ուսուցչի մասնագիտական օրվա առթիվ, նշել է, որ Նատաշա Պողոսյանը այն մանկավարժներից է, որը կարողանում է իր դասը վերածել արվեստի, կրթել, դաստիարակել, մրցունակ սերունդ, որոնք իրենց գիտելիքներով կարողանում են առաջատար բուհեր ընդունվել, սովորել, օլիմպիադաներում բարձր միավորներ արձանագրել և դառնալ աշխատաշուկայում պահանջարկ վայելող մասնագետներ:

Ուսուցչի մասնագիտական տոնը շնորհավորել է բանասիրական ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Անահիտ Աթայանը: «Նատաշան ուսանողական տարիներին աչքի էր ընկնում իր լուռ, հանգիստ, խոհուն բնավորությամբ: Ակնհայտ տեսնում էի, որ նրա մեջ նստած է մանկավարժ մարդը»,- ասել է Անահիտ Աթայանը՝ աշխատանքային բեղուն գործունեություն մաղթելով իր նախկին ուսանողուհուն:

Հանդիպմանը ներկա էր նաև ԱՀ ԿԳՍ նախարարության մասնագիտական կրթության բաժնի պետ, հ.գ.թ., դոցենտ Լուսինե Ղարախանյանը, ով խմբագրել է Նատաշա Պողոսյանի գրքերը: Նա, խոսելով եվրոպական կրթական համակարգի իդեալական ուսուցչի մասին, նշել է, որ դրա կրողը Նատաշա Պողոսյանն է: «Այսօր մենք լավ կենսագրություն ունեցող մարդկանց կարիք ունենք, ինչը նշանակում է չլինել պատեհապաշտ և պայմանականությունների գերի: Այս ամենը ինձ սովորեցրել է «Մանկավարժի օրագիր» գիրքը»,- ասել է բաժնի պետը՝ հավելելով որ Նատաշա Պողոսյանը բարձրակարգ, իշխանավոր ուսուցչուհու կերպար է:

«Նա մանկավարժ է, հոգեբան, մարտիկ, և այդ ամենը տեղավորում է իր տաղանդի նշույլներում: Օրագրային գրառումների մեջ ամփոփված է ուսուցիչ հասկացության և առաքինության բոլոր կատեգորիաները, բարձրակետերը»,- ասել է բանասիրական ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Ջինաիդա Բալայանը:

Ուսուցչի աշխատանքին զուգահեռ Նատաշա Պողոսյանը հրատարակել է մի շարք գրքեր, որոնց հերոսներն են իր աշակերտները, որոնցից շատերն այսօր ուսանողներ են և նույնպես ներկա էին միջոցառմանը: «Ինձ ու դասընկերներիս գրքի հերոսներ դարձնելով հեքիաթների անիրական կյանքում, Դուք կերտել եք նվիրական հեքիաթ և մեկն եք այն խիզախ հոգիներից, ովքեր հանձնվել չգիտեն, որոնց համար բարին արարելն ու լավին ձգտելը հոգու անբաժանելի մասն է դարձել»,- ասել է նախկին աշակերտուհի Տաթև Ղահրամանյանը:

ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը շնորհավորել է տոնի առթիվ՝ նշելով, որ ուսուցիչը միշտ վերև է թռչում, միշտ պայքարի կիզակետում է, արժեքային վերադասավորումները հաղթահարելի են նրանց շնորհիվ: Նա նաև շնորհակալություն է հայտնել նրանց կատարած անգնահատելի աշխատանքի համար:

Նատաշա Պողոսյանը պատմել է իր ուսանողական տարիներից, մանկավարժական գործունեությունից՝ ապագա մանկավարժներին պատգամելով երբեք չընկրկել դժվարությունների առջև, միշտ պայքարել, հաղթահարել դժվարությունները, լինել աշխատասեր և հասնել նպատակակետին՝ ուղենիշ ունենալով լավ մասնագետ դառնալու նպատակը: Նա նաև շնորհակալություն է հայտնել միջոցառումը կազմակերպելու և ջերմ ընդունելության համար՝ ներկաներին նվիրելով իր գրքերից:

ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՊՀ-ՈՒՄ

Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում Արցախի պետական համալսարանում հյուրընկալվել և դասախոսությամբ հանդես են եկել ազգագրագետ, պատմաբան Լևոն Աբրահամյանը և գրող, կինոգետ Դավիթ Մուրադյանը: ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը շնորհակալություն է հայտնել բանախոսներին դասախոսությամբ հանդես գալու համար՝ կարևորելով ծրագրի նշանակությունը:

Լևոն Աբրահամյանը, հանդես գալով «Թամանյանի Երևանը ազգայինի և ստալինյանի միջև» թեմայով դասախոսությամբ, մանրամասն խոսել է ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հիմնական նախագծերից ու կառույցներից, ներկայացրել դրանց վերաբերյալ ժամանակին առկա քննադատությունները:

«Օպերայի և բալետի թատրոնի շենքը պետք է լիներ ժողովրդական տուն»,- ասել է ազգագրագետը՝ հավելելով, որ ժողտան նախագիծը սկսելով և այն շարունակաբար կատարելագործելով՝ Թամանյանը ձգտել է իրականացնել բոլոր նորագույն պահանջները բավարարող թատրոն, նաև մայրաքաղաքին համապատասխանող՝ և՛ բովանդակությամբ, և՛ ճարտարապետական լուծումով:

«Ճարտարապետի երազանքը իրականանում է 1988թ.: Որդին՝ Գևորգ Թամանյանը, խմբագրում է անավարտ շենքի նախագիծը ու դարձնում սիմետրիկ կառույց»,-ասել է բանախոսը՝ ընդգծելով, որ Ալեքսանդր Թամանյանը իր նախագծերում մտածված ձևով օգտագործում էր եկեղեցական կառույցը:

Հաջորդիվ դասախոսությամբ հանդես է եկել Դավիթ Մուրադյանը՝ «Ինչպե՞ս է մշակույթը ստեղծում երկիր» թեմայով:

«Մշակույթը կերտում է ժամանակ և մարդ՝ այդ ժամանակի մեջ, մշակույթը հայրենիքի շարունակությունն է, հայրենիքին բոլորովին նոր չափում և բովանդակություն տվողն է»,- ընդգծել է կինոգետը:

«Հայկական կինոն նույնպես մասնակցել է մի շարք հարցերի՝ ո՞վ էինք մենք, ինչպիսի՞ն դարձանք, ի՞նչ արժեքներ և սրբություններ սկսեցինք սիրել պատասխանները ստանալու գործընթացին»,- ասել է Դավիթ Մուրադյանը՝ հավելելով, որ «Մենք ենք մեր սարերը» ֆիլմը ձևավորել է անկախ Հայաստանի գաղափարը, իսկ «Բարև, ես եմ» ֆիլմը ազգային ես-ի գաղափարը:

Կինոգետը իր խոսքը եզրափակել է՝ նշելով, որ մշակույթը պատմականորեն իր դերը կատարել է՝ ստեղծելով 20-րդ դարի Հայաստան և ընդգծել այս դարի լեզվով, նոր գեղարվեստական գաղափարներով ու մտածողությամբ 21-րդ դարի հայ մարդու և Հայաստանի կերպար ստեղծելու անհրաժեշտությունը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Ուսուցչի տոնին ընդառաջ բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում հոկտեմբերի 4-ին ԱրՊՀ աշխարհագրության ամբիոնի մի խումբ ուսանողներ և դասախոսներ, ա.գ.թ. Վիլեն Սաֆարյանի գլխավորությամբ, այցելեցին Ասկերանի շրջանի Փառուխ և Խրամորթ գյուղերի դպրոցներ:

Համալսարանականները ծանոթացան դպրոցների խնդիրներին: Աշխարհագրության ամբիոնի դասախոս Ռ. Թովմասյանի խոսքով՝ մտահոգիչը մասնագետների պակասն է և որոշակի գույքային խնդիրները: Վ. Սաֆարյանը, շնորհավորելով ուսուցիչներին մասնագիտական տոնի առթիվ, պատրաստակամություն հայտնեց անհրաժեշտության դեպքում մասնագիտական աջակցություն ցույց տալ:

«Մենք քարտեզներ նվիրեցինք դպրոցին՝ ակնկալելով, որ դրանք կօգնեն աշխարհագրության դասավանդումն ավելի արդյունավետ կազմակերպելուն: Մեզ համար հաճելի էր այն փաստը, որ, ի հեճուկս գյուղում առկա բազմաթիվ խնդիրների, աշակերտներն իրենց ապագան տեսնում են միայն հայրենիքում»,- նշում է աշխարհագրություն 3-րդ կուրսի ուսանողուհի Իվետտա Հովսեփյանը:

ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՄԱՆՀԵԹԹԵՆՎԻԼ ՔՈԼԵՋԻ ՊՐՈՖԵՍՈՐԸ ԱՅՑԵԼԵԼ Է ԱՐՊՀ

Նյու Յորքի Մանհեթթենվիլ քոլեջի փիլիսոփայության ֆակուլտետի դեկան, փիլիսոփայության պրոֆեսոր Շվոն Նաշ-Մարշալը դասախոսությամբ հանդես է եկել Արցախի պետական համալսարանում: Դասախոսության թեման էր «Չարի խնդիրը», որին ներկա էին դասախոսներ, ուսանողներ:

Պրոֆեսորը հատկապես քննարկել է արկածի ու ողբերգության տարբերությունները, համեմատել իրար հետ՝ նշելով, որ առաջինը անսպասելի իրողություն է, հետաքրքիր փորձություն, որի դեպքում ինչ-որ վատ իրավիճակում գտնվելով՝ հերոսները կարողանում են ուժ հավաքել ու շարժվել առաջ, ապա երկրորդի դեպքում ուղղակի թևաթափ են լինում՝ չցանկանալով առաջ շարժվել:

Ասածը հիմնավորելու համար Շվոն Նաշ-Մարշալը ներկաներին պատմել է մի դեպք՝ մանրամասն ներկայացնելով իրավիճակը: «Չնայած բոլորը կարծում են, որ Շեքսպիրի «Համլետ»-ը ողբերգություն է, ես այդպես չեմ մտածում, որովհետև ստեղծագործության ամբողջ ընթացքը բնորոշ է ողբերգությանը, սակայն վերջում հերոսը հավաքում է ուժերը ու շարունակում իր կյանքը»:

Շվոն Նաշ-Մարշալը ներկայացրել է նաև Արցախի հետ կապված իր ծրագրերը՝ շեշտելով, որ իր և իր համախոհների հիմնած «Քրիստոնյաները կարիքի մեջ են» հիմնադրամի նախաձեռնությամբ արդեն ամեն ամառ Արցախում կազմակերպվում են անգլերենի դասընթացներ, որին ներգրավված են նաև ԱրՊՀ ուսանողներ: Կարևորելով այս ծրագիրը՝ նա նշել է, որ այն շարունակական է լինելու:

Պրոֆեսորը պատասխանել է նաև ուսանողների հարցերին:

ԱՄՆ ԹԱՖԹՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԸ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԱՐՊՀ-ՈՒՄ

Հոկտեմբերի 18-ին ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլեչեր իրավագիտության և դիվանագիտության դպրոցի պրոֆեսոր Փոլ Արթուր Բերկմանը դասախոսությամբ հանդես է եկել Արցախի պետական համալսարանում:

Դասախոսության թեման էր «Գիտական դիվանագիտությունը», որին ներկա էին «Անգլերեն լեզու և գրականություն», «Թարգմանչական գործ» մասնագիտության ուսանողներ: ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, ողջունելով հյուրին, շնորհակալություն է հայտնել համալսարան այցելելու և դասախոսությամբ հանդես գալու համար՝ ընդգծելով դասախոսության թեմայի արդիական լինելը:

Պրոֆեսորը ներկայացրել է գիտության և տեխնոլոգիայի դիվանագիտության ոլորտը, ինչը նոր երևույթ է, որը գիտնականները սկսել են ուսումնասիրել 2015 թվականից:

Անդրադառնալով Արկտիկայի հանդեպ տարբեր պետությունների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի ունեցած հետաքրքրություններին՝ Արթուր Բերկմանը ընդգծել է, որ նրանցից յուրաքանչյուրը փորձում է կիսել և օգտագործել այդ տարածքը սեփական շահերի համար՝ հավելելով, որ այդ տարածքի շուրջ աշխարհում բանակցություններ են ընթանում: Այդ համատեքստում նա կարևորել է շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտությունը:

Պրոֆեսորը պատմել է 1900-2000թթ. բնապահպանական պայմանագրերից, տարբեր պետությունների ազդեցություններից ու դրանց արդյունքում առաջացած խնդիրներից, ազգային և ընդհանուր շահերից, Գիտական միությունների միջազգային խորհրդի կատարած հետազոտություններից: Նա նաև խոսել է Արկտիկայից՝ ներկայացնելով տարածքի հանդեպ եղած միջազգային պահանջները:

Արթուր Բերկմանը պատասխանել է ուսանողների հարցերին:

ԱրՊՀ-ՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՑ է ՎԱՐԵԼ ՊՐԱՀԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՍՊԻՐԱՆՏ ՎԱԼԵՆՏԻՆ ԱՐՏՅՈՄՈՎԸ

Սեպտեմբերի 3-ից հոկտեմբերի 17-ը Արցախի պետական համալսարանում դասընթաց է վարել Պրահայի տնտեսական հետազոտությունների կենտրոնի ասպիրանտ Վալենտին Արտյոմովը: Դասընթացի թեմաներն էին «Վիճակագրությունը» և «էկոնոմետրիկան», որին մասնակցել են տնտեսագիտության ֆակուլտետի տարբեր մասնագիտության ուսանողներ:

Ասպիրանտը ներկայացրել է վիճակագրության և էկոնոմետրիկայի հիմնական դրույթները, ռեգրեսիայի անուղղակի գիծը, տոկոսային փոփոխությունը, գծային ռեգրեսիան, կիրառվող տվյալները:

«Ռեգրեսիոն վերլուծությունը էկոնոմետրիկայի հիմնական և ամենահաճախ օգտագործվող մեթոդներից է: Այն վիճակագրական մեթոդ է, որն ուսումնասիրում է որևէ կախյալ փոփոխականի (Y) և մեկ կամ մի քանի անկախ փոփոխականների (X1,X2,...,Xn) միջև կախվածությունը»,- նշել է մասնագետը՝ ներկայացնելով ու բացատրելով բանաձևերը: Նա նաև անդրադարձել է գնահատման հաջորդականությանը՝ ներկայացնելով մոդելի ձևակերպումը, գործակցի գնահատումը, գնահատումների տարբերությունը:

Բանախոսը հիմնականում ուշադրություն է դարձրել ոլորտում թույլ տրվող հիմնական սխալներին և դրանց շուրջ հանգամանալից պարզաբանումներ ներկայացրել ուսանողներին:

Ուսանողները կարևորել են նման դասախոսությունների և գործնական պարապմունքների նշանակությունը մասնագիտության մեջ կայանալու համար՝ ցանկություն հայտնելով, որ շարունակական բնույթ կրի:

ՀՈԳԵԲԱՆ ՀԱՆՆԱ ԱՎԱՆԵՍՅԱՆԸ ԱրՊՀ-ՈՒՄ ՀԱՆԴԵՍ է ԵԿԵԼ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ

Հոկտեմբերի 16-ին Արցախի պետական համալսարանում դասախոսությամբ հանդես է եկել Մոսկվայի ավիացիոն ինստիտուտի պետական և համայնքային կառավարման ամբիոնի դասախոս, հ.գ.թ., դոցենտ Հաննա Ավանեսյանը:

Դասախոսության թեմաներն էին «Անհատի ճանաչողական ընդունակությունները» և «Հոգեբանական խորհրդատվության հիմունքները», որին ներկա էին ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, դասախոսներ, ուսանողներ: Պրոռեկտորը, ողջունելով հյուրին, շնորհակալություն է հայտնել համալսարան այցելելու և դասախոսելու համար՝ կարևորելով դրա արդյունավետությունը մասնագիտության հանդեպ հետաքրքրության ձեռքբերման համար:

Նա խոսել է հոգեկան գործընթացներից՝ մանրամասն ներկայացնելով ճանաչողական-իմացական ոլորտը ներառող ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը, խոսքը:

Անդրադառնալով գործընթացներից մեկին՝ հիշողությանը՝ հոգեբանը նշել է, որ լավ հիշողություն ունեցող մարդն ունի մի շարք առավելություններ, քանի որ դրա շնորհիվ լավ է սովորում, ինչ-որ նոր բան սովորելով՝ կարողանում է խորացնել գիտելիքները, արդյունավետ աշխատել ու տիրապետել հսկայածավալ տեղեկության: Նա նաև խոսել է վախի դրսևորման ձևերից և գործոններից: «Հիմնախնդիրը արդիական է, քանի որ հասարակական կյանքի արագ փոփոխությունների արդյունքում կրթության և դաստիարակության աղճատվածությունը, տեղեկատվության ծավալն ու ինտենսիվությունը հանգեցրել են նորանոր վախերի ձևավորման»,- ասել է Հաննա Ավանեսյանը՝ խորհուրդ տալով ուսանողներին լինել հոգեբանորեն հանգիստ վիճակում:

Հոգեբանը ընդգծել է, որ հատկապես պետք է ուշադրություն դարձնել և օգնել այն մարդկանց, ովքեր գտնվում են դեպրեսիայի, նյարդային լարվածության, տագնապային վիճակների մեջ՝ խորհուրդ տալով պահել հավասարակշռությունը:

ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ

Արցախի պետական համալսարանում դասախոսությամբ հանդես է եկել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, արևելագիտության ֆակուլտետի դասախոս, պ.գ.թ., դոցենտ Սարգիս Գրիգորյանը: Հանդիպումը նախաձեռնել էր ԱրՊՀ Հայագիտական կենտրոնը, որին ներկա էին դասախոսներ, ուսանողներ:

Դասախոսության թեման էր «Սիրիական հակամարտության ներկայիս իրողությունները և թուրքական ռազմական գործողությունները Սիրիայում», որի շրջանակում բանախոսը անդրադարձել է հակամարտության ծագման սկզբնական փուլին, ռազմական գործողություններում ներգրավված ուժերին, մանրամասն խոսել ահաբեկչական խմբերից, ընդդիմադիր ուժերից:

«Թուրքիան, Սիրիայում սկսելով «Եփրատի վահան» ռազմական գործողությունները, հայտնվեց միջնամասում՝ այդ տարածքների քրդերին միավորվելու հնարավորություն չտալով»,- ասել է Սարգիս Գրիգորյանը:

Թուրքիայի ծավալած հաջորդ ռազմական գործողությունը «Ձիթենու ճյուղ»-ն էր, որի ընթացքում, բանախոսի խոսքով, թուրքերը գրավեցին Աֆրին քրդաբնակ ու ամենախիտ բնակեցված քաղաքը, որի դպրոցներում այսօր դասավանդում են թուրքերեն լեզու, գրականություն, մշակույթ: Ռազմական գործողությունների նպատակն է հնարավորինս ճնշել Սիրիայի քրդաբնակ հատվածները:

«Մյուս ռազմական գործողությունը եղավ վերջերս, երբ Էրդողանը հայտարարեց, որ նպատակ ունի Սիրիայի հյուսիսում ստեղծել անվտանգության գոտի, և բնակեցնել փախստականների»,- ասել է բանախոսը՝ ընդգծելով, որ դրանով Էրդողանը Թուրքիայի համար կարևոր հարցեր է լուծում:

Խոսելով հոկտեմբերի 9-ին Սիրիայում սկսված «Խաղաղության ակունք» ռազմագործողությունից՝ Սարգիս Գրիգորյանը նշել է, որ Թուրքական զինուժի ներխուժումը Սիրիա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ ամերիկյան զինված ստորաբաժանումները լքեցին Եփրատ գետի արևելյան հատվածը:

«Միջազգային հանրության արձագանքը բացասական է թուրքական հավակնոտ ծրագրերին, սակայն Էրդողանը հաշվի չի առնում այդ արձագանքը»,- ասել է բանախոսը՝ շեշտելով, որ Սիրիայի հակամարտության կարգավորումը սարերի ետևում չէ:

Պատմության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ., պրոֆեսոր Արարատ Վարդանյանը շնորհակալություն է հայտնել Սարգիս Գրիգորյանին ԱրՊՀ այցելելու և դասախոսությամբ հանդես գալու համար:

ԱրՊՀ-ՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ է ԵԿԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԳԵՏԸ

Արցախի պետական համալսարանում ուսանողների հետ հանդիպել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դիմորդների հետ աշխատանքների համակարգող Աստղիկ Աթանյանը և հանդես եկել դասախոսությամբ:

Նա ներկայացրել է հանրային առողջապահության ոլորտը, այդ ոլորտում կրթության աշխատանքային և մասնագիտական հեռանկարները, Հայաստանի Ամերիկյան համալսարանի Հանրային առողջապահության մագիստրոսական ծրագրի ընդունելության պահանջները, ընթացակարգն ու վերջնաժամկետները, ինչպես նաև ուսման վարձի օժանդակության արտոնյալ պայմանները:

Անդրադառնալով մարդու առողջությանը ազդող գործոններին՝ նա առանձնացրել է սոցիալ-տնտեսական գործոնները, ֆիզիկական միջավայրը, վարքագիծը, բժշկական օգնությունը:

Աստղիկ Աթանյանը ներկայացրել է առողջապահության գործունեության հիմնական ոլորտները՝ կանխարգելում, խթանում, պաշտպանություն: «Վերջինս նշանակում է վերահսկել ինֆեկցիոն հիվանդությունները, շրջակա միջավայրի հետ կապված վտանգները, ապահովել առողջությանը չվնասող աշխատանքային պայմաններ, ճիշտ կառավարել արտակարգ իրավիճակները»,-ասել է նա: